Արձանագրություն N 8

Երևանի պետական համալսարանի

2011 թ. հուլիսի 7-ի գիտական խորհրդի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 97 անդամներից 68-ը:

Խորհրդի նախագահ, ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց հաստատել հետևյալ օրակարգը.

Օրակարգ.

1. Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում:
   (Զեկ.՝ Է. Վ. Չուբարյան, Հ. Լ. Սարգսյան)

2. Ասպիրանտուրայում կրեդիտային համակարգի ներդրման արդյունքների մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)

3. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

4. ԵՊՀ-ի 2010 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) տարեկան կատարողականի մասին:
   (Զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)

5. ԵՊՀ-ի 2011 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) առաջին հնգամսյակի կատարողականի մասին:
   (Զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)

6. ԵՊՀ-ի կողմից հիմնադրված դուստր կազմակերպությունների 2010թ. ֆինանսական գործունեության արդյունքների մասին:
   (Զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)

7. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի հաստատում: (Զեկ.՝ Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան)

8. Ընթացիկ հարցեր:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Սիմոնյանը հանդես եկավ ներածական խոսքով:

Լսեցին. - Պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը:

Մրցութային հանձնաժողովների նախագահներ Է. Չուբարյանի և Հ. Սարգսյանի՝ մասնակիցներին ներկայացնելուց հետո թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին՝

1.	Հակոբյան Հակոբ Ավագի	թվային անալիզի և մաթ. մոդելավորման ամբ. դոցենտ	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /1997/ Ա.01.01 – մաթ. անալիզ դոցենտ /1990/
2.	Հովհաննիսյան Պետրոս Հովհաննեսի	հայոց պատմության ամբ. դոցենտ	պատմ. գիտ. թեկնածու /1976/ Է.00.01 – հայոց պատմություն
3.	Մանասյան Մաքսիմ Գառնիկի	սոցիալ-տնտեսական աշխարհ. ամբ. դոցենտ	աշխարհ. գիտ. դոկտոր /2010/ ԻԴ.00.20 – տնտ., սոց. և քաղ. աշխարհագրություն դոցենտ /1991/

Քվեարկությանը մասնակցեցին 67 անդամ:

Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հարությունյան Բաբկեն – նախագահ
Հակոբյան Լևոն
Օսիպյան Լիա
Ստեփանյան Լիլիթ
Երանոսյան Արգամ

Պրոֆեսորի կոչման համար թեկնածուները ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

1. Հակոբյան Հակոբ Ավագի – կողմ -66, դեմ - 0, անվավեր – 1
2. Հովհաննիսյան Պետրոս Հովհաննեսի – կողմ - 63, դեմ - 3, անվավեր – 1
3. Մանասյան Մաքսիմ Գառնիկի – կողմ - 50, դեմ - 14, անվավեր – 3

Որոշեցին. –1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:
2. Վերոհիշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:
3. 15 օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել բոհ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ շնորհելու համար:

Լսեցին. - Ասպիրանտուրայում կրեդիտային համակարգի ներդրման արդյունքների մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

Լսեցին. - ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման մասին: (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

Լսեցին. - ԵՊՀ-ի 2010 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) տարեկան կատարողականի մասին:
(Զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)

Որոշեցին. - Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև միջնորդությամբ՝ հաստատելու Երևանի պետական համալսարանի 2010 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) տարեկան կատարողականի հաշվետվությունը:

Լսեցին. - ԵՊՀ-ի 2011 թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) առաջին հնգամսյակի կատարողականի մասին:
(Զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

Լսեցին. - ԵՊՀ-ի կողմից հիմնադրված դուստր կազմակերպությունների 2010թ. ֆինանսական գործունեության արդյունքների մասին:
(Զեկ.՝ գլխավոր հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)

Որոշեցին. - Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև միջնորդությամբ՝ «ԵՊՀ տպագրատուն», «ԵՊՀ հրատարակչություն» և «ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների 2010թ. զուտ շահույթը թողնելու հիշյալ դուստր կազմակերպություններին՝ հետագա գործունեությունը զարգացնելու նպատակով:

Լսեցին. - Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի հաստատում: (Զեկ.՝ Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան)

Որոշեցին. -

1. 2011/12 ուսումնական տարվանից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը կազմակերպել կրեդիտային համակարգով՝ ըստ «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» մեթոդական փաստաթղթի:
   1.1. Հաստատել «Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը» ըստ ներկայացված նախագծի:
2. Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը՝ 2011 թ. սեպտեմբերից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը կազմակերպել սույն կանոնակարգով՝ հնգամյա շրջափուլով (1-ին շրջափուլը՝ 2011-2016 թթ.):
   2.1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման արդյունքների մասին ամենամյա տեղեկատվություն ներկայացնել գիտխորհրդին յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին:
3. ԵՊՀ ֆակուլտետների դեկաններին՝ ֆակուլտետային պատասխանատուների միջոցով ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացմանը:
4. Գլխավոր հաշվապահին՝ 2011թ. սեպտեմբերի վերջին ներկայացնել ԵՊՀ պրոֆեսորա-դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի հնգամյա ֆինանսավորման հետ կապված ծախսերը:
   4.1. Որակավորման բարձրացման ծրագրով կազմակերպվող դասընթացների ժամաքանակը ներառել դասախոսների բեռնվածության մեջ կամ վարձատրությունը կատարել ժամավճարային կարգով:
5. Ուսումնամեթոդական և հետբուհական լրացուցիչ կրթության վարչություններին՝ համաձայնեցնել հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով դասախոսների ուսումնական բեռնվածությունը:

Լսեցին. - Ընթացիկ հարցեր:

10.1 Լսեցին. - «ԹՄ աուդիտ ՓԲԸ» անկախ աուդիտորական եզրակացություն 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններ:
(Զեկ.՝ «ԹՄ աուդիտ ՓԲԸ» տնօրեն Թաթուլ Մովսիսյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

10.2

Լսեցին.- ԵՊՀ դիմումների շարժն ըստ մասնագիտությունների (1-ին հայտով): (Զեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)

Որոշեցին. - Ընդունել ի գիտություն:

10.3 Ուսումնամեթոդական աշխատանքները տպագրության երաշխավորելու մասին:

10.3.1

Լսեցին.- Աննա Ռոբերտի Մաքսուդյանի «Կազմակերպական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկը (դասախոսությունների նյութերի ժողովածուն) տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհրդի և «Կիրառական Սոցիոլոգիայի» ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված (դասախոսությունների նյութերի ժողովածուն գիտական բարձր մակարդակով գրված ուսումնամեթոդական ձեռնարկ է՝

Աննա Ռոբերտի Մաքսուդյանի «Կազմակերպական կառավարում» ուսումնամեթոդական ձեռնարկը (դասախոսությունների նյութերի ժողովածուն) երաշխավորել տպագրության:

10.3.2

Լսեցին.-Նարեկ Սմբատի Գալստյանի «Եվրոպական ինտեգրման տեսություն և արդիականություն» ուսումնամեթոդական ձեռնարկը (դասախոսությունների նյութերի ժողովածուն) տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և «Քաղաքական ինստիտուտների և գործընթացների» ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված դասախոսությունների նյութերի ժողովածուն գիտական բարձր մակարդակով գրված ուսումնամեթոդական ձեռնարկ է՝

Նարեկ Սմբատի Գալստյանի «Եվրոպական ինտեգրման տեսություն և

արդիականություն» ուսումնամեթոդական ձեռնարկը (դասախոսությունների նյութերի ժողովածուն) երաշխավորել տպագրության:

10.3.3

Լսեցին.- Եզնիկ Սահակի Միրզոյանի և Սամվել Հակոբի Ջիլավյանի «Առաձգականության տեսության խնդիրների ժողովածուն» տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի խորհրդի և Մեխանիկայի ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված ուսումնամեթոդական ձեռնարկը գիտակրթական բարձր մակարդակով գրված և գործնական նշանակություն ունեցող խնդիրների ժողովածու է՝

Եզնիկ Սահակի Միրզոյանի և Սամվել Հակոբի Ջիլավյանի «Առաձգականության տեսության խնդիրների ժողովածուն» երաշխավորել տպագրության:

10.3.4.

Լսեցին.- Ալեքսանդր Ալեքսանդրի Մարգարովի «Դեմոկրատիայի տեսություն» դասախոսությունների նյութերի ժողովածուն տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված դասախոսությունների նյութերի ժողովածուն գիտակրթական բարձր մակարդակով գրված ուսումնամեթոդական աշխատանք է՝

Ալեքսանդր Ալեքսանդրի Մարգարովի «Դեմոկրատիայի տեսություն» դասախոսությունների նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

10.3.5.

Լսեցին.- Ալեքսանդր Ալեքսանդրի Մարգարովի «Տրանզիտոլոգիա (դասախոսությունների նյութերի ժողովածու)» ուսումնամեթոդական աշխատանքը տպագրության

երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի խորհրդի և Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված դասախոսությունների նյութերի ժողովածուն գիտակրթական բարձր մակարդակով գրված ուսումնամեթոդական աշխատանք է՝

Ալեքսանդր Ալեքսանդրի Մարգարովի «Տրանզիտոլոգիա (դասախոսությունների նյութերի ժողովածու) » գիտամեթոդական աշխատանքը երաշխավորել տպագրության:

10.4. **Լսեցին.-** Սերգեյ Արարատի Աղաջանյանի «Գուրգեն Մահարու արձակի պոետիկան» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- Հաշվի առնելով ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի և Հայ նորագույն գրականության ամբիոնի միջնորդությունը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված մենագրությունը գիտական բարձր մակարդակով գրված աշխատություն է՝ Սերգեյ Արարատի Աղաջանյանի «Գուրգեն Մահարու արձակի պոետիկան» մենագրությունը երաշխավորել տպագրության:

10.5.

Լսեցին.- 2011-2012 ուտարվա հեռակա ուսուցմամբ նոր մասնագիտությունների ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին:

Որոշեցին.- Հաստատել 2011-2012 ուտարվա հեռակա ուսուցմամբ նոր մասնագիտությունների ուսման վարձի չափն ըստ մասնագիտությունների.

Հ/Հ	Կրթական գործունեության տեսակները				Ուսումնական հաստատության ուսումնական գործունեության պայմանները						
	Դասիչը	Մասնագիտությունը	Մասնագիտական կրթության մակարդակը	Կրթության ձևը	Սովորողների համակազմն ըստ մասնագիտությունների, կուրսերի և ուսուցման ձևերի					Ուսուցման ժամկետը (տարի)	Վարձի չափը
					1	2	2.5				

1	2	3	4	5	6					7	8
1.	050100	Կրթության կազմակերպում	մագիստրատուրա	հեռակա	25					2,5	240000
2.	040200	Սոցիոլոգիա	մագիստրատուրա	հեռակա	20					2,5	320000
3.	030100	Փիլիսոփայություն	մագիստրատուրա	հեռակա	10					2,5	240000
4.	030300	Հոգեբանություն	մագիստրատուրա	հեռակա	30					2,5	360000
5.	032500	Սփյուռքագիտություն	մագիստրատուրա	հեռակա	10					2,5	240000
6.	030600	Լրագրություն	մագիստրատուրա	հեռակա	20					2,5	280000

10.5. Գիտության բնագավառում ակնառու ձեռքբերումների, համալսարանական կրթության զարգացման գործում ունեցած զգալի ավանդի համար և ծննդյան 60-ամյա տարեդարձի կապակցությամբ, ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ, ԵՊՀ էկոլոգիական անվտանգության կենտրոնի ղեկավար, տեխնիկական գիտություն-ների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Պետրոսի Փիրումյանին ԵՊՀ ոսկե մեդալով և մեկամսյա աշխատավարձով պարգևատրելու մասին:

10.6.

Լսեցին.- ԵՊՀ Սփյուռքագիտության ամբիոն կառուցվածքային ստորաբաժանումը Հայ բանասիրության ֆակուլտետի կազմում ընդգրկելու մասին:
(Զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Որոշեցին.- 1. ԵՊՀ Սփյուռքագիտության ամբիոն կառուցվածքային ստորաբաժանումը ընդգրկել Հայ բանասիրության ֆակուլտետի կազմում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Նախագահ Ա. Սիմոնյան

Գիտքարտուղար Վ. Պետրոսյան